ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Խ-894[11]-06.05.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական հանրաքվեի մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-347-Ն օրենքի 14-րդ հոդվածի 13-րդ մասը լրացնել նոր՝ 12-րդ կետով.

«12) Հանրապետության նախագահին:»

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագրում «մուծումներ» բառը փոխարինել «նվիրատվություն» բառով,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հիմնադրամը ձևավորվում է տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների նվիրատվություններից»:

3) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Հիմնադրամին նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) տվյալ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեցող անձանցից,

2) օտարերկրյա պետություններից,

3) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների,

4) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից,

5) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից,

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից,

7) անանուն անձանցից»:

4) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հիմնադրամին նվիրատվություն կատարելու իրավունք չունեցող սուբյեկտների կողմից քարոզչության հիմնադրամին կատարած նվիրատվությունները փոխանցվում են համայնքային բյուջե»:

5) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Քարոզչության հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը»:

6) 7-րդ մասում «մուծում» բառը փոխարինել «նվիրատվություն» բառով,

7) 8-րդ մասում «մուծում» և «կամավոր մուծում» բառերը փոխարինել «նվիրատվություն» բառով,

8) 9-րդ մասում «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով,

9) 12-րդ մասի առաջին նախադասությունում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողով» բառերով, իսկ երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք և այն տեղադրում իր համացանցային կայքում»:

10) 14-րդ մասում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով,

11) 15-րդ մասում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովին» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին» բառերով,

12) 16-րդ մասի առաջին նախադասությունում «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով,

13) 16-րդ մասի առաջին նախադասությունում «վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերաբերելի մասով, ինչպես նաև 9-11-րդ և 13-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո մինչև 2023 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է քարոզչության հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը: